# ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՎԻԹ ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

## ՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց պատմական ճարտարապետության մշակույթը արտահայտվեց ժառանգորդական երկու արմատներով՝ ուրարտական և հելլենիստական: Ուրարտամետ մշակույթը հատկապես նշանավորվեց երեքհազարամյա Վան քաղաքի ճարտարապետական հուշարձանների օրինակով, որոնք հայ ժողովրդի համար ստեղծագործական ոգեշնչման անսպառ աղբյուր էին և շարունակում են մնալ այդպիսին: Վանա լճի ավազանի շուրջ ծավալվող ձեռակերտ և անձեռակերտ ճարտարապետական լանդշաֆտը անասելի հոգեպարար բովանդակություն ունի (Առնոս, Արտոս, Սիփան սարեր, երբեմնի Նարեկավանք, Աղթամարի Ս. Խաչ, Վանա լճի արևելյան ափերին բազմած հեքիաթային Վանա ամրոց, Մեծ Եղեռնի տարիներին իսպառ ավերված «քաղաքամեջ» և լայնածավալ Այգեստաններ): Վանը պատմական Հայաստանի հնագույն քաղաքներից է: Այն ուրարտական փառապանծ Տուշպա մայրաքաղաքն է, որ հաջորդ դարերին կոչվել է նաև Շամիրամակերտ՝ տարածքը գրաված Ասորեստանի թագուհու անունով: Միջնադարյան մատենագրության մեջ Վանը անվանվել է նաև Երվանդավան, Քաղաքն ամրականի և Ամուրն ավան:

Վանի տարածքից հայտնի առաջին հնագիտական նյութերը Դ.-Գ. բրոնզեդարյան հազարամյակներից են: Քաղաքի բարգավաճ կյանքը սկսվել է նրա վերահիմնադրությամբ Ուրարտուի Սարդուրի Ա. արքայի կողմից Ք. ծ. ա. 854-822 թթ.[1]: Մովսես Խորենացին հիշատակում է, որ Ք. ծ. ա. Ջ. դարում Վանի տարածքում կարևոր շինարարական գործունեություն է ծավալել նաև Շամիրամ թագուհին: Հայկական հելլենիզմի և վաղքրիստոնեական մշակույթները թույլ են արտահայտված Վանի շինարարական պարեգրության մեջ: Սակայն հիմնվելով Պտղոմեոսի, Ստրաբոնի և Խորենացու հաղորդումների վրա՝ կարելի է հավաստել, որ Վանը անտիկ ժամանակներում, որպես քաղաք, ունեցել է իր կարգավիճակին համապատասխան քաղաքաշինական կառուցվածք[2]: Վաղ միջ-

---

1 Տե՛ս **C. F. Lehmann-Haupt,** *Armenien und Nord Mesopotamien in Alterun Gegenwart*, Berlin, Reimer, 1900, էջ 120-132:

2 Տե՛ս **Ptolomee Claudii Ptolomae,** *Gegraphia e Codicibus Recognit, Prologomenis, Annotatione, Indicibud,*

նադարում ավերված Վանը Է. դարի 80-ական թվերին երկրորդ անգամ վերակառուցվել է և ավելի ուշ՝ Գագիկ Արծրունու օրոք բարգավաճման շրջան է բոլորել[3]: 1021 թ. և ողջ զարգացած միջնադարում շարունակական ընդհարումների պատճառով քաղաքը բազմիցս ավերվել և վերաշինվել է: Ուշ միջնադարյան Վանը մեծ չափով տուժել է 1648 թ. երկրաշարժից, բայց նույն ժամանակներում վերակառուցվել և ընդարձակվել է: Այս ժամանակահատվածում քաղաքը դարձել է ուշ միջնադարյան Հայաստանի կարևոր կենտրոններից մեկը[4]: Վան մեծապես տուժել է ԺԹ. դարավերջին տեղի ունեցած Համիդյան ջարդերից: Մեծ Եղեռնի տարիներին խիստ ավերվել և ամբողջապես հրկիզվել է նրա պատմական մեծ արժեք ներկայացնող բերդաքաղաքը[5]: Արդի Վանը այժմյան Թուրքիայի տարածքում փոքր քաղաք է, որ գտնվում է երբեմնի բերդաքաղաքից 2 կմ արևելք[6]: Բնակավայրը և շրջակայքը մեծապես տուժեցին 2012 թ. տեղի ունեցած երկրաշարժից:

Վանի հայկական ճարտարապետական ժառանգությունը արտահայտված է տարածքի լանդշաֆտում, քաղաքաշինական տվյալներում, գոյատևող ու մատենագրությամբ հասած ճարտարապետական հուշարձաններում և դրանցից ածանցվող արվեստի այլ բնագավառներում:

Ուրարտական Վանի սահմանները դեռևս չեն ճշտվել: Հիմք ընդունելով Խորենացու հաղորդումը՝ պետք է կարծել, որ այն զբաղեցրել է բերդաքաղաքի տարածությունը, թեկուզ հնագիտական տվյալները միայն ամրոցի և նրա արևելյան հարակից տարածքից են[7]: Արծրունյաց Վանը ունեցել է եռամաս կառուցվածք և կազմված է եղել միջնաբերդի վերածված ամրոցից, բերդաքաղաքից և արվարձաններից:

Ամրոցը՝ 120 մ լայնությամբ և 1600 մ երկարությամբ, ձգվում է բերդաքաղաքի հյուսիսային կողմում, շուրջ 70 մ բարձրություն ունեցող հսկայածավալ ժայռազանգվածի վրա: Այն հին և միջնադարյան աշխարհի ճարտարապետական յուրօրինակ համալիր է, որ կազմված է 50 x 100 մ չափերով ներքին բերդից, դրա շուրջ ծավալվող 75 x 550 մ չափեր ունեցող արտաքին բերդից և պարագծային պարիսպներից, որոնք տեղ-տեղ ընդհատվում են ժայռակերտ պատնեշներով: Հնում կատարված բազմաթիվ վերաշինությունների պատճառով, այսօր ամրոցի կառույցները չափազանց փոխված են և կարիք ունեն մանրամասն չերտագրական ուսումնասիրության: Այնուամենայնիվ, ըստ պատմական տվյալների, ամրոցը կազմված է եղել վերևում նշված՝ արևելյան և արևմտյան մասերից, ընդ որում, կարելի է պնդել, որ արևմտյան կողմում ներքնաբերդի դոնժոնատիպ ծավալը Գուրգեն Արծրունու կողմից Թ. դարում կառուցված պալատն է: Փաստո-

*Tabulus Instruxit Carlus Milorus*, vol. 1, 2 Parisiis, P. Firmin Dodot,1883, էջ 10:

3 Տե՛ս **Թովմա Արծրունի,** Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 252-253:

4 Տե՛ս **Առաքել Դավրիժեցի,** Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 378-381:

5 Տե՛ս **Ա-Դո**, Մեծ դեպքերը Վասպուրականում, Երեւան, 1917, էջ 22-25:

6 Տե՛ս **Yurt Ansiklopedisi**, հտ. 10, Ստամբոլ, 1993, էջ 7607-7609 (թուրքերեն), **Բարս Թուղլաջի (Բարսեղ Թուղլաջյան)**, Օսմանյան քաղաքներ, Ստամբոլ, 1985, էջ 304 (թուրքերեն):

7 Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երեւան, 1940, էջ 34-36. հմմ. **Н. Я. Марр, И. А. Орбели**, *Археологическая экспедиция 1916 г. в Ван*, С.Петербург, 1922, էջ 27. հմմ. **T. A. Sinclair,** *An Architectural and archeological survey of Eastern Turkey*, vol. 1, London, 1987, էջ 179-188:

րնն, ամրոցի ակնարկվող մասում ամերիկյան արշավախումբը 1930-ական թթ. բացել է Ս. Հովհաննես ենթադրյալ անունով եկեղեցին[8], որը, անկասկած, Թովմա Արծրունու և Անանուն պատմիչի աշխատությունում հիշատակված՝ Գագիկ Արծրունու կառուցած Ս. Գևորգ պալատական եկեղեցին է[9]: «Ս. Հովհաննեսը» տարածքից ոչ հեռու գտնվող Ավանցի եկեղեցու անունն է: Վանա ամրոցի արևելյան թևը ամբողջապես ուրարտական ժամանակների կառուցապատում է: Օսմանյան ժամանակներում կատարված ընդարձակումների կապակցությամբ ամրոցի արևելյան և արևմտյան տարածքները իրար են միացվել:

Համաշխարհային և հայկական ճարտարապետության համար կարևոր է ամրոցի տարածքի կառուցապատման և պարսպաշինության համեմատական ուսումնասիրությունը: Այն նշանակալից հուշարձան է, և դրա բովանդակած շինարարական շերտերի փաստագրավավերագրական նյութերի քննական ուսումնասիրությունը կարևոր է: Ամրոցի պահպանված պարիսպները բովանդակում են ողղանկյուն հենապատեր, պեսպիոններ, կլոր աշտարակներ, զանազան այլ ամրաշինական միջոցառումներ, ինչպես օրինակ՝ երկար սափիճաններ, դիտարաններ, գաղտնուղիներ և այլն: Այնպես է պտացվում, որ ամրոցի պարիսպների ուսումնասիրությունը կարող է լույս սփռել նաև փաստագրական նյութերով պահպանված Վանի բերդաքաղաքի պարսպաշինական համակարգի տարածական կառուցվածքի վրա: Վանա պաշտպանական համակարգն ու ամրոցի կառուցապատումը անտիկից դեպի միջնադար անցած բերդաշինության թանգարան է, որ իր նյութերով լրացնում է ուրարտական, հելլենիստական, միջնադարյան Հայաստանի (Անի, Մանազկերտ, Ամբերդ, Օձաբերդ, Վահկա և այլն) ամրաշինական նյութերը:

Ուրարտական Վանը՝ Տուշպան ունեցել է երկու ամրոց՝ «Ժայռը» և «Հողաբերդը» կամ Ք. ծ. ա. 735-713 թթ. Ռուսա թագավորի կառուցած Ռուսախինիլին: Ամրոցներն իրար կապված են գաղտնուղիով: Հողաբերդն իր ենթամասերով և ժայռափոր սենյակներով նույնքան կարևոր է, որքան Տուշպան: Երկու ամրոցներում էլ պահպանվել են ուրարտական ժամանակների ժայռափոր ճարտարապետության անկրկնելի օրինակներ, որոնցից հատկապես կարևորվում են Տուշպայի՝ 10,5 x 6,0 x 3,5 մ և 12,7 x 6,0 x 2,9 մ չափերով Խորխորի մեծ և փոքր սենյակները, «Նավթահոր» անունով հայտնի 12,4 x 7,3 x 3,0 մ չափերով դամբարանը, ներքնաբերդի՝ 9,3 x 9,4 x 5.5 մ և 6,3 x 4,3 x 5,5 մ չափերով ժայռափոր սրահները, 9,4 x 6, 2 x 5,5 մ չափերով մեծ սենյակն ու հյուսիսային 20.5 x 8,5 x 7,95 մ չափերով դահլիճը և այլն: Ռուսախինիլի նույնատիպ հուշարձաններից են՝ «Արձագանքող ժայռափորը» (Ձրմ-զրմ մաղարա), «Բախտի անիվը», «Միերի դուռը» և այլն: Նշվածները Հին Արևելքի ճարտարապետության ուշ շրջանի կարևոր հուշարձաններ են, որոնք հայկական միջնադարյան այրային ճարտարապետության ժառանգորդական հիմնարար փուլն են:

**Վանա բերդաքաղաքը** 68 հեկտար մակերեսով ամրոցատակին ծավալվող անկա-

8 Տես **T. A. Sinclair,** նշվ. աշխ., էջ 183:

9 Տես **Թովմա Արծրունի,** նշվ. աշխ., էջ 252:

նոն ուղղանկյուն պարագծով տարածք է, որ այսօր խսպառ ավերված է: Նրա պարագծով անցնող պարիսպները եղել են երկպակ և խրամապավոր: Մինչև Մեծ Եղեռնի տարիներին բերդաքաղաքի հրկիզումը, պարսպաշտարակների և քաղաքային դարպասների որոշ հատվածներ դեռևս գոյություն են ունեցել[10]: Փաստորեն, ամրոցից դեպի բերդաքաղաք զահավիժող պարիսպները, բերդաքաղաքի շուրջ կազմել են մեկ ասպարեզ լայնությամբ և երկու կողմից պարսիսպներով պատված շրջանցող փողոց, որ առանձին հատվածներում ունեցել է քաղաքային դարպասներ: Ինչպես ցույց է տալիս բերդաքաղաքի բազմաթիվ հատակագծերի ուսումնասիրությունը, տարածքում եղած փողոցների ցանցը անկանոն հատակագծում է ունեցել, թեև նրանում նշմարելի է երկու փոխուղղահայաց գլխավոր փողոցներից կազմված «կվադրատային» (քառաբաժան) համակարգի գոյությունը: Վանա բերդաքաղաքի գլխավոր փողոցները երկուսն են: Դրանցից մեկը երկարում է Թավրիզյան՝ արևելյան դարպասից դեպի Իսկալեի կամ արևմտյան կողմում եղած «Ծովակի» դարպասը: Մյուս փողոցը երկարում է փոխուղղահայաց՝ նախորդ փողոցի կենտրոնական հատվածից դեպի Միջին ու Սարայի դարպասները: Նկարագրված փողոցների հատման վայրում և շրջակայքում եղել են առևտրահասարակական շենքերով կառուցապատված բերդաքաղաքի հրապարակները: Դրանցից մեկն է Ս. Պողոս և Ս. Պետրոս զույգ եկեղեցիներով կազմված քաղաքային վանքի հրապարակը և դրան առընթեր՝ ուշ միջնադարյան «Թոփչու» մզկիթը: Այս է պատճառը, որ ԺԹ. դարում հրապարակն անվանվել է նաև «Մզկիթյու», մինչդեռ միջնադարյան անունը եղել է վանքի հրապարակ:

**Վանի քաղաքային կենտրոնը** առևտրահասարակական շենքերով խճողված մասն է: Այն սկզբնավորվել է բերդատակի ագորատիպ հանգույցից և ծավալվել դեպի բերդաքաղաքի դարպասները[11]: Փաստորեն, Վանի առևտրահասարակական կենտրոնի ԺԹ. դարի իրավիճակը դեգրադացված (աստիճանաբար փոքրացած) պետք է համարել, նկատի ունենալով, որ այն գոյություն է ունեցել միայն հայերով բնակեցված հատվածում՝ Թավրիզյան և Միջին դարպասների միջև: Իրականում այն առավել ևս պետք է զարգանար դեպի Ծովակի կողմը, քանի որ Վանա լիճը միջնադարում երթևեկելի է եղել հատկապես առևտրական և ճամփորդական նպատակներով: Սակայն օսմանյան տիրապետության տարիներին Ծովակի դարպասի փակումն ու դրա շրջակա թաղամասի հայաթափումը պատճառ են դարձել այդ ուղղությամբ առևտրական շենքերի կրճատման: Տվյալ տարածքի՝ զարգացած միջնադարյան ժամանակների քաղաքային կյանքում ունեցած բարձր դերի մասին վկայում է այն, որ Գագիկ Արծրունու կառուցած երկու եկեղեցիներն էլ (Ս. Սիոնը և Ս. Գևորգը) այստեղ են գտնվել: Բերդաքաղաքի հարավային կողմի Միջին դարպասի շուրջ եղել են ԺԹ. դարի հասարակական շենքեր՝ դատարանը, ոստիկանատունը, առաջնորդարանը, զանազան առևտրական և արհես-

10 Տես **P. Guneo**, *Etude sur la topographie et l'conographie historique de la ville de Van*, Armenian Studies in memoriam Haik Berberian, էջ 125-184:

11 Տես **Ch. Texier,** *Description de l'Armenie , la Perse et la Mesopotamie*, tom 1-2, Paris, 1842, պլանշետներ 35, 36, 38:

պավորական շենքեր[12]: Ըստ օսմանյան փաստաթղթի՝ քաղաքամիջի կարևորագույն հասարակական շենքերի կազմում եղել են երեք մզկիթ և վեց եկեղեցիներ, այդ թվում՝ Ս. Տիրամայրը, Ս. Վարդանը, Ս. Պողոսը և Ս. Պետրոսը, Ս. Սահակը, Փոքր Ծիրանավորը[13]: Նշված եկեղեցիների կազմը տարբեր է Վարագավանքի ու Ղալաթիո եկեղեցացանկերի տվյալներով[14]: Օսմանյան տվյալ փաստաթղթի նպատակն է եղել ցույց տալ քաղաքամիջի կարևորագույն հասարակական շենքերը, այդ թվում և թերի կազմով հայկական եկեղեցիները: Հաշվի առնելով ավելի ուշ հասած հայկական դիրքային քարտեզների տվյալները՝ կարելի է ամփոփել, որ Վանա առևտրահասարակական համալիրը ունեցել է T-աձև կառուցապատում և ծավալվել է գլխավոր փողոցների երկարությամբ, որտեղ գլխավորը եղել է Ս. Պողոս և Ս. Պետրոս եկեղեցիների հրապարակը: Հրապարակներ եղել են նաև դարպասների շուրջ և կարևորագույն հասարակական շենքերի ու եկեղեցիների առաջ: Վերոնշյալ օսմանյան հատակագծային փաստաթղթում հայկական եկեղեցիների տեղադրումը մոտավոր է, կա անվանական ու քանակի անճշտություն, նկատելի է, որ բերդաքաղաքի մասում մզկիթների վրա անունները նշվել են, բայց եկեղեցիներինը՝ ոչ:

**Վանի Այգեստանները կամ քաղաքի արվարձանները** մոտ 690 հեկտար անտառապատ տարածություն էր: Այստեղ եղած փողոցների ցանցն ու հրապարակները հետաքրքիր տեղաբաշխում ունեին: Բերդաքաղաքի կենտրոնական մասերից դեպի Միջին դարպաս և դրանից հարավ երկարող փողոցը պարիսպներից դուրս միանում էր լճափից հասնող փողոցին ու ձևավորում քաղաքի դարպասամերձ հրապարակը: Սա, շրջանցելով բերդաքաղաքի պարիսպները, հարավարևելյան կողմից շարունակվում էր դեպի Թավրիզյան դարպասը և Վանա հնագույն արվարձանի՝ Հայկավանի կենտրոնում ձևավորում էր մի հրապարակ ևս: Տվյալ հրապարակից արևմտյան ուղղությամբ շարունակություն էր ստանում քաղաքի ամբողջական գլխավոր փողոցը և արևելյան կողմով 6 կմ երկարությամբ կազմում էր Այգեստանների՝ արևմուտքից արևելք ընթացող «Սղգա պողոտան» (Սղգավի ճաղղեն), որ երկարում էր մինչև մերձակա Սղգա գյուղը: Սղգա փողոցի կենտրոնական հատվածում հյուսիս-հարավ ընթացող մի այլ փողոց փոխհատելով՝ առաջացնում էր երկու հաջորդական հրապարակներ ևս՝ Սղգա փողոցին հարակից «Խաչ փողանը» ու նրանից հարավ գտնվող «Արարքի հրապարակը» (Արարուց մեյդան): Նշված հրապարակներից առաջինը վարչահասարակական նշանակության էր, և մինչև Մեծ Եղեռնը այստեղ էին կենտրոնացել Վանում գործող մի քանի օտարերկրյա հյուպատոսություններ, մինչդեռ երկրորդը՝ միանգամայն առևտրական

---

12 Տե՛ս **Ա-Դո**, նշվ. աշխ., էջ 24-25:

13 **Շ. Էոզթուրք և ուրիշ հեղինակներ**, Վանի պատմական բնակելի տները, հոդվածաշարք, " Is Bankasi Kultur ve Senat Dergisi", 32, Ankara, 1966 (թուրքերեն):

14 Տե՛ս **Գ. Տէր Բարսեղեան**, Ցուցակ Վան-Տոսպ նահանգի հայաստռ ժողովրդոց եկեղեցեաց. «Արծուի Վասպուրական», 1858, թ. 11, հաւելուած: Նույն ցուցակը արտատպվել է նաև «Արեւելեան Մամուլ»-ում, 1894, թ. 9, էջ 22-24, թ. 12, էջ 61-66: Տե՛ս նաև **Ա. Սաֆրաստյան**, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների ցուցակներն ու թաքրիրները 1912-1913 թթ.. «Էջմիածին», 1965, Ա-Բ, էջ 76-84, 1966, Ը, էջ 62-69:

նշանակության: Վանա Այգեստաններում կար մի երրորդ հրապարակ եւս, որ գտնվում էր Նորաշինու թաղամասում եւ հարակից էր Ս. Հակոբ եկեղեցուն:

Այգեստաններում եղել է ութ թաղամաս՝ Շամիրամ, Հայկավան, Կլոր դար, Ստորին եւ Վերին Նորաշեններ, Հայնկույսների, Արարքի, Նորապտուկների: Արվարձանների բաղկացուցիչ կարելի է համարել նաեւ բերդաքաղաքից մի փոքր հեռու ընկած, Վանա լճի արեւմտյան ափի Ավանց գյուղը: Մինչեւ հայկական բռնագաղթը, բացի Կլոր դարը, նկարագրված քաղաքամասերը շնչում էին հայեցի եւ նշված թաղամասերը ընդունված էր անվանել նաեւ իրենց եկեղեցիների անունով: Սա նշանակում է, որ Վանի քաղաքաշինական կառուցապատմանը բնորոշ է եղել միջնադարյան՝ ըստ ծխական եկեղեցիների տեղաբաշխումը: Քաղաքապարածքի ձգված համաչափության հետեւանքով, արվարձանների առեւտրահասարակական համակառույցները բերդաքաղաքում եղածի անմիջական շարունակությունը չեն կազմել, ինչպես Կարին եւ Կարս քաղաքների օրինակներում է, այլ Այգեստանների փվյալ համալիրները ձեւավորվել են առանձնացված՝ որպես քաղաքաշինական ուրույն միավորներ:

**Վան քաղաքի եկեղեցիների ճարտարապետությունը.** Վանա լուսավորչական համայնքի եկեղեցիները հիմնականում 13-ն են: Դրանցից 7-ը եղել են քաղաքամիջում, 6-ը՝ արվարձաններում: Ավելացնելով ամրոցի տարածքում եղած երկու եկեղեցիները, ԺԴ. դարում մզկիթի վերածված Ս. Սիոնն ու Ավանցի Ս. Հովհաննեսը, ստացվում է, որ Վանում եղել են 10 բերդաքաղաքային եւ 7 արվարձանային եկեղեցիներ: Տարբեր աղբյուրներից եւ դաշտային դիտումներից հավաքված տեղեկություններով՝ Վանա քաղաքամիջում եղած եկեղեցիները ունեցել են հետեւյալ ճարտարապետական նկարագիրը.

**Ս. Տիրամայր եկեղեցին** ըստ ավանդության եղել է Վանի հնագույն սրբավայրերից մեկը: Հուշարձանի մասին մեզ հասած առաջին տեղեկությունը ԺԴ. դարից է, սակայն, եկեղեցու պատերին փորագրված սեպագիր արձանագրությունները շատ ավելի մեծ տարիք են վերագրում դրան[15]: ԺԹ. դարի դրությամբ հուշարձանախումբը կազմված է եղել մի բակի շուրջ դասավորված հարավ-արեւելյան Ս. Տիրամոր եւ հարակից Ս. Հրեշտակապետ եկեղեցիներից, հյուսիս-արեւմտյան անկյունում գտնվող Վանի առաջին՝ «Հիսուսյան» անունը կրող դպրոցից: Դպրոցը կառուցվել է ԺԹ. դարի կեսերին, իսկ Ս. Հրեշտակապետը Վանա «Ժայռի» հինավուրց ժայռափորները հիշեցնող մատուռ է: Ս. Տիրամայր եկեղեցին արտաքուստ 11 x 13 մ չափերով պաճար է, որ հետագայում (ըստ երեւույթին ուշ միջնադարում) գմբեթավորվել է: Ըստ Ժ. Մ. Թիերրիի հրապարակած հատակագծի աղոթասրահը խաչվող կամարներով համակարգ է[16]: Մինչդեռ եկեղեցու՝ Պ. Կունեոյի հրապարակած հատակագծում 4 որմնամույթերով եւ կողային թաղակապ խորշերով գմբեթավոր դահլիճ է[17]: Փաստորեն, Ս. Տիրամայրը մեհյանից վերափոխված

15 Տե՛ս **H. F. B. Lynch,** *Armenia. Travels and Studies*, London, 1901, հտ. 2, էջ 106:

16 Տե՛ս **J. M. Thierry,** *La Renaissance architectural du XVII siècle au Vaspurakan, «Armenian Studies in memoriam Haik Berberian»*, Frezno, 1985, էջ 806:

17 Տե՛ս **P. Cuneo,** *Architettura Armena dal quarto al diciannovesimo secolo*, Roma, De Luca editore, vol. 1-2, 1989, էջ 549-550:



Հայկավանքի ներքին տեսքը



Վանի Խաչ փողան



Կարմրվոր Ս. Աստվածածին վանքը



Վանի Այգեստանների
ընդհանուր տեսքն ամրոցի կողմից



Հարուստ վանեցիի բնակարան



Վանի Այգեստանների ժողովրդական
ժառանգորդության կառուցած շենքերից




Ներքին Վարագավանքի
ընդհանուր հատակագիծը



Վերին Վարագավանքի
ընդհանուր հատակագիծը



Վանի բնակելի տան դասակարգում



Վան (բնակելի տան ճակատներ)



Վանի ամրոցը՝
Թավրիզյան դարպասի կողմից



Վանի բերդաքաղաքը՝ ամրոցի կողմից մինչեւ
Մեծ Եղեռնի տարիներին հրկիզումը

բազիլիկ եկեղեցի է, որն ուշ շրջանի վերանորոգումներից մեկի ժամանակ նաեւ գմբեթավորվել է:

**Ս. Վարդան եկեղեցին** գտնվել է նախորդից մի փոքր արեւելք եւ, ըստ ավանդության, Ե. դարի երկրորդ կեսին հիմնադրել է Վարդան Մամիկոնյանի դուստրը՝ Շուշանը[18]: Գեւորգ Շերենցի եւ այլ աղբյուրների համաձայն՝ Ս. Վարդանը վաղ միջնադարյան պաճարից եւ ուշ միջնադարյան գավիթից կազմված համակառույց է: Դրան 1881 թ. ավելացվել է նաեւ Վան քաղաքի օրիորդաց առաջին՝ Շուշանյան վարժարանը: Ժ. Մ. Թիերրիի հրապարակած հատակագծի համաձայն՝ Ս. Վարդան եկեղեցին արտաքուստ 8.5 x 10.4 մ չափերով ուղղանկյուն եւ գմբեթավոր կառույց է: Եկեղեցու դահլիճը 5.5 մ կողմով քառակուսի գմբեթածածկ տարածք է: Խորանը ձգված կողերով կիսաշրջան է, որի բացվածքը 3.5 մ է, իսկ խորությունը՝ 2.5 մ: Խորանին հարակից ավանդատները ներքին լայնությամբ 1.4 մ են եւ երկայնքով՝ 1.75 մ[19]: Դատելով հասած լուսանկարչական տեղեկություններից՝ եկեղեցու ներքին ճակատներից արեւմտյանը կենտրոնական մասում ունի 3 մ բացվածքով եւ 1 մ խորությամբ որմնակամար, որի մեջտեղում բացվել է աղոթասրահի երբեմնի դուռը: Ինտերիերի մյուս ճակատները կամարակալ են, որոնց վրա բարձրացվել է հետագայում կառուցված գմբեթը: Ս. Վարդան եկեղեցին ներքուստ աղյուսաշեն է եւ գմբեթային մասում ցածր լուծում ունի, որը դիտողի վրա գմբեթաձեւ թաղի տպավորություն է թողնում: Ուշագրավ է եկեղեցու արտաքին պատերի 2 մ հաստությունը, որ հնարավորություն է տվել ներքին ճակատներում տեղաբաշխել 1 մ խորությամբ որմնակամարներ: Նկատելի է, որ պաճարի արտաքին պատերը լուսամուտներ չունեն եւ դրանց վրա եղել են սեպագիր արձանագրություններ[20]:

**Ս. Պողոս եւ Ս. Պետրոս հարակից եկեղեցիները** վանեցիները սովորաբար անվանել են՝ «ժամը ժամի վրա» կամ «ջուխտակ ժամը ժեռ քարի վրա» եւ «Առաքելոց վանք»: Երկու եկեղեցիներն էլ տեղադրված են եղել բերդաքաղաքի գլխավոր հրապարակի հյուսիսային կողմում: Դրանց վրա եղած սեպագիր արձանագրությունները, խուլ ու անսովոր հաստության պատերը պարզորոշ ցույց են տալիս ուրարտական ժամանակների հիմնադրություն լինելը: Այս հուշարձանների մասին թվագրական վաղագույն տվյալը պահպանվել է Ս. Պողոս եկեղեցու հարավային պատի մեջ ագուցված խաչքարի վրա՝ հայկական թվականության 409 թ. (960 թ.)[21]: Եկեղեցիների մասին ձեռագրային առաջին հիշատակությունը ԺԴ. դարից է[22]: ԺԹ. դարում տեղի ունեցած երկրաշարժի պատճառով եկեղեցիները ավերվել են: Իսկ 1913 թ. դրությամբ միայն Ս. Պողոս եկեղեցին է վերականգնված եղել[23]: Ս. Պետրոս եկեղեցին, նյութական միջոցների չգոյության պատճառով մնացել է կիսավեր[24]:

---

18 Տե՛ս «Տեսարանք հայրենի աշխարհաց, Վան կամ Շամիրամակերտ». «Արծուի Վասպուրական», 1858, թ. 8, էջ 211. հմմ. **Գ. Շերենց**, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 27:

19 Տե՛ս **J. M. Thierry,** նշվ. աշխ., էջ 84:

20 Տե՛ս **H. F. B. Lynch**, նշվ. աշխ., հտ. 2, էջ 106:

21 Անդ, էջ 107:

22 Տե՛ս **Ե. Լալաեանց,** Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Վան, 1915, էջ 15-16:

23 Տե՛ս **W. Bachman,** *Kirchen und Moschen in Armenier und Kurdistan*, Wien, 1913, էջ 6-9:

24 Անդ, պլանշետ 25. հմմ. «Արծուի Վասպուրական», 1858, թ. 8, էջ 211:

Վանի եւ Վասպուրականի եկեղեցական ճարտարապետության ժառանգությանը բնորոշ է զույգ եկեղեցիներով հորինվածքի նախասիրությունը: Տվյալ հորինվածքի օրինակներից է նաեւ Ս. Պողոս եւ Ս. Պետրոս եկեղեցիներով կազմված համալիրը:

**Ս. Պողոս եկեղեցին**, Վալտեր Բախմանի կատարած չափագրության համաձայն, 8 x 12 մ արտաքին չափերով, ուղղանկյուն, գմբեթավոր դահլիճ տիպի հորինվածք է: Դահլիճի ներքին չափերը՝ երկարությամբ 6,5 մ է, լայնությամբ՝ 4.5 մ: Գմբեթատակ քառակուսու կողը 2.9 մ է: Կողային թաղակապ խորշերի խորությունը 1 մ է, որոնց հյուսիսային խորանամերձ մասում տեղադրված է մկրտության ավազանը: Խորանը ձգված կողերով կիսաշրջան է, ընդորում, դրա բացվածքը 2.7 մ է, խորությունը՝ 2.0 մ, իսկ դասի նկատմամբ բարձրությունը՝ 0.9 մ: Փաստորեն, խորանի երկու կողմերում եղած չորսական աստիճանները դասից տանում են դեպի խորանի բեմը: Այստեղ եղած վեմքարը շրջանակված է փայտաշեն խչնոսպասխով: Խորանը առանցքային լուսամուտ չունի: Ավանդատները խորանի երկու կողմերում տեղադրված 1.5 x 0.8 մ չափերի փոքր ու երկհարկ սենյակներ են, որոնք արեւելյան վերջավորությունում խորանաձեւ են: Ավանդատան երկրորդ հարկից աստիճանների միջոցով կարելի է իջնել խորանի տարածք: Ավանդատների առաջին հարկի մուտքերը բացվում են դեպի եկեղեցու տրանսեպտը: Ս. Պողոս եկեղեցու ողջ ներսույթը կամարկալված է թաղազոտիների միջոցով: Աղոթասրահը հիմնականում լուսավորվում է թմբուկի լուսամուտներից: Ներքուստ կորագծային եւ արտաքինից բազմանիստ թմբուկի տրամագիծը 2,9 մ է: Գմբեթատակ քառակուսուց անցումը դեպի գմբեթատակ օղակը առագաստաձեւ է, որ արտաքինից ունի ավանդական անկյունային ելուստներ: Ս. Պողոս եկեղեցուն բնորոշ է արտաքին պատերի 2,3 մ հասնող անսովոր հաստությունը, հանգամանք, որ ցույց է տալիս նրա ուրարտական կառույց լինելը: Այն, վաղ քրիստոնեական շրջանում վերածվելով եկեղեցու, հաջորդ դարերում գմբեթավորվել եւ հարստացվել է ժամանակին բնորոշ հարդարանքներով: Եկեղեցու արտաքին եւ ներքին ճակատները զուսպ են ու պարզ: Դրանք հազվադեպ մշակվել են զարդագոտիներով: Արեւմտյան ճակատին բնորոշ է մուտքի շրջանակի ընդգծվածությունը, որ կողային մասերում ունի նաեւ որմնախորշեր: Փաստորեն եկեղեցու ստիլիտար տարրերը, ինչպես՝ մուտքը, մկրտարանը, մոմավառման խորշը եւ այլն, մշակվել են զարդագոտիներով:

**Ս. Պետրոս եկեղեցին** բազիլիկատիպ հորինվածք ունի եւ գտնվել է Ս. Պողոս եկեղեցու հարավային կողմում: Երկու եկեղեցիների միջեւ շինարվեստի եւ ճարտարապետության ընդհանրությունները թույլ են տալիս պնդելու, որ դրանք միաժամանակ են կառուցվել: Տրամաբանելով հասած լուսանկարչական տեղեկություններից[25]՝ Ս. Պետրոս եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն պարագծով, ներքուստ թաղակապ՝ Ս. Պողոսի չափերի կառույց է եղել: Եկեղեցու դահլիճը երկու զույգ որմնամույթերի միջոցով բաժանվել է երեք սրահ: Առաստաղը արեւմտյան եւ կենտրոնական հատվածներում թաղակապ է՝ որմնամույթերի վրա բոլորվող թաղակամարային գոտիներով: Եկեղեցու արտաքին

25 Տե՛ս «Արծուի Վասպուրական», 1859, թ. 8, էջ 211:

զուսպ լուծումներում ուշագրավ է մուտքի զանգվածեղ լինելը: Երեք մեծաչափ սրբատաշ քարեր միասնաբար կազմում են ուղղանկյուն մուտքի կողային հատվածները, դրան ներքին մակերեւույթներին համապարած սեպագիր արձանագրություններ են[26]:

**Ս. Նշան կամ Ս. Էջմիածին եկեղեցին** գտնվել է քաղաքամիջի առաջնորդարանի հարեւանությամբ, Թավրիզյան դարպասից մի քանի հարյուր մետր հարավարեւմուտք: Այն եղել է առեւտրահասարակական կենտրոնի բաղկացուցիչ տարրերից: Կառույցի մասին չափագրական եւ լուսանկարչական տեղեկություններ դեռեւս չկան: Սակայն ելնելով նկարագրական մի քանի կցկտուր տեղեկություններից՝ կարելի է հավաստել, որ այն եղել է փոքր գմբեթավոր տիպի եկեղեցի[27]:

**Ս. Սահակ եւ Ս. Ստեփանոս Նախավկայի հարակից եկեղեցիները** գտնվել են բերդաքաղաքի ներկարարների արհեստավորական թաղամասում, Ս. Պողոս եւ Ս. Պետրոս հարակից եկեղեցիներից 200 մ հարավարեւմուտք: Ս. Սահակ եւ Ս. Ստեփանոս եկեղեցիները նույնպես զույգ սրբավայրերից կազմված հորինվածք ունեն, ընդորում, Ս. Սահակն ավելի մեծ է եղել քան Ս. Ստեփանոսը: Վերջինը կառուցվել է փայտից եւ, հավանաբար, հատկացվել կանանց[28]: Ս. Ստեփանոս եկեղեցին ունեցել է փայտաշեն մեծ գավիթ, որը ծառայել է որպես Վանի համքարությունների եւ այլ համաքաղաքային միջոցառումների հավաքատեղի[29]:

Վան քաղաքի մնացյալ եկեղեցիների մասին փաստագրական տվյալները դեռեւս սուղ լինելով՝ քաղաքաշինական, թվագրական, ցուցակագրական եւ այլ խնդիրներ լրացուցիչ ուսումնասիրության են կարոտ:

**Փոքր Ծիրանավոր եկեղեցին** գտնվել է առեւտրահասարակական կենտրոնի հարավարեւմտյան մասում, քաղաքային դատարանի մերձակայքում: Ինչպես վկայում է Հ. Լինչը՝ այն եղել է զողտրիկ, փոքր չափերի եւ նուրբ համաչափություններով կառույց[30]:

**Ս. Սիոն եկեղեցին**, ինչպես վկայում է Անանուն Արծրունին, կառուցվել է Գագիկ Արծրունի թագավորի նախաձեռնությամբ Ժ. դարի առաջին կեսին[31]: Հետեւելով ԺԹ. դարի պոլսենի փաստագրողների հաղորդած տեղեկություններին՝ կարելի է հավաստել, որ տաճարային համակառույցը գտնվել է Վանա քաղաքամիջի Մեծ մզկիթի տեղում եւ նվիրվել է Երուսաղեմի հայկական թաղամասի վայրին՝ Ս. Սիոն լեռանը, որտեղ մինչ օրս իշխող դիրք ունի Ս. Հակոբ վանքը[32]: Անանուն Արծրունի պատմիչի նկարագրությամբ՝ Ս. Սիոնը, կրկնելով Ս. Հակոբ վանքի եկեղեցական մասի հորինվածքը, կազմված է եղել կենտրոնական դիրքով Մայր եկեղեցուց եւ դրանից հարավ ու հյուսիս տեղադրված երկուական երկհարկ դասավորությամբ մատուռներից: Հարավային թեւի առաջին հար-

26 Անդ:

27 Տե՛ս **H. F. B. Lynch,** նշվ. աշխ., հտ. 2, էջ 106. հմմ. **Գ. Շերենց**, նշվ. աշխ., էջ 27:

28 Տե՛ս **Գ. Շերենց**, նշվ. աշխ., էջ 21-22:

29 Տե՛ս անդ:

30 Տե՛ս **H. F. B. Lynch,** նշվ. աշխ., հտ. 2, էջ 106:

31 Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, նշվ. աշխ., էջ 252-253:

32 Տե՛ս **Գ. Շերենց**, նշվ. աշխ., էջ 17-18. հմմ. **N. Bezalel**, *Armenian Arts Treasures of Jerusalem*, Phaidon edition, 1980, էջ 122:

կում եղել է Ս. Խաչելության, իսկ երկրորդում կամ վերնատանը՝ Ս. Խորհրդավոր ընթրիքին նվիրված մատուռը: Հյուսիսային թևում նույն հաջորդականությամբ եղել են Ս. Հարության և Ս. Համբարձման մատուռները[33]: Հետաքրքիր է նկատել, որ Թովմա Արծրունուն շարունակողի նկարագրած համալիրը ամբողջությամբ համընկնում է Երուսաղեմի Ս. Հակոբ վանքի հորինվածքին: Ավելին՝ Ս. Հակոբ վանքի հատակագծային չափերի ու պարագծի համատեղումը Վ. Բախմանի չափագրած Վանի Մեծ մզկիթի հետ նույնպես համընկնում է[34]: Ս. Հակոբ վանքը կազմված է կենտրոնական դիրքով գմբեթավոր բազիլիկ տիպի համանուն տաճարից, որն ըստ տեղեկության, կառուցվել է խաչակրաց արշավանքի տարիներին՝ ԺԲ. դարում, տեղում եղած սրբավայրի վրա: Ս. Հակոբ եկեղեցուց հարավ է ԺԶ. դարում հիմնովին վերակառուցված Ս. Էջմիածին անունը կրող երկհարկ եկեղեցին, իսկ հյուսիսային կողմում են՝ վաղ միջնադարյան Ս. Մինաս և Ս. Ստեփանոս Նախավկայի երկհարկ դասավորությամբ մատուռները[35]:

Վանի Մեծ մզկիթի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Վ. Բախմանը: Ճարտարապետ ճանապարհորդի նկարագրությամբ՝ մզկիթը 24 x 29 մ չափերով, աշխարհի կողմերի նկատմամբ տեղակայված կառույց է[36]: Փաստորեն, այն տեղադրությամբ կողմնորոշված չէ դեպի Մեքքան, ինչպես ընդունված է մահմեդական ճարտարապետության մեջ, դրա մեհրաբը ունի կանոնիկ հարավային տեղադրություն[37]: Մինարեն գտնվել է շենքի հյուսիսարևմտյան անկյունում: Մզկիթի արտաքին պատերը, բացի արևելյանից, ուղղագիծ են: Արևելյան պատը հատակագծում բեկյալ գծի նկարվածք ունի և կազմված է դեպի հարավ ընթացող երեք հատվածներից: Իրականում տվյալ ուրվագիծը պայմանավորված չէ մզկիթի բովանդակությամբ, լինելով նախկին տաճարի արևելյան պատը՝ դրանում պահպանվել է վերևում նկարագրված տաճարային համակառույցի եռակի բաժանումը: Շենքի հարմարեցված լինելու մասին է վկայում նաև մզկիթի արևմտյան ճակատի՝ Վ. Բախմանի աշխատությունում հրատարակված լուսանկարը, որտեղ մուտքի աղյուսաշեն պատը ամբողջությամբ նստած է անհավասար տողեր բովանդակող քարակերտ հիմքի վրա[38]: Սա Վանում ընդունված կարծր քարի վրա հողաշեն կամ այլ շինանյութով շենքի կառուցման ժառանգորդական կարգը չէ, այլ, ինչպես հավաստում է շենքի նկարագրությունը, այն կառուցվել է տեղում գոյություն ունեցող քարաշեն կառույցի կրող մասերի վրա: Փաստորեն, նկարագրված հատակագծային հորինվածքի վրա հարմարեցվել է դազնեւիդյան ոճական առանձնահատկություններով աղյուսաշեն կառույց: Մեծ մզկիթը կազմված է արևմտյան, հյուսիսային և արևելյան կողմերով շրջանցող արտաքին սյունասրահից և հարավային կողմի առանցքով տեղադրված 80 մ² մակերեսով գմբեթածածկ աղոթասրահից: Սրահի սյուների թռիչքն ու

---

33 Տե՛ս **Թովմա Արծրունի և Անանուն**, նշվ. աշխ., էջ 252-253:

34 Տե՛ս **W. Bachman,** նշվ. աշխ., էջ 69-74, պլանշետ 60:

35 Տե՛ս **N. Bezalel,** նշվ. աշխ., էջ 122:

36 Տե՛ս **W. Bachman,** նշվ. աշխ., էջ 59:

37 Տե՛ս **George Michell (editor),** *Architecture of the Islamic World, its history and social meaning*, Thames and Hudson Ltd., London, 1978, էջ 16:

38 Տե՛ս **W. Bachman,** նշվ. աշխ. էջ 59:



Վանի ամրոցը՝ լճի կողմից



Տեսարաններ Վանի պարիսպներից



Վան քաղաքի ընդհանուր հատակագիծը՝ 1916 թ. տվյալներով



Սարդուրի արքայի վիմական արձանագրությունը Վանի ժայռի վրա



Միհերի դուռը



Վանի ամրոցն ու բերդաքաղաքն ըստ ԺԹ. դարի օսմանյան փաստաթղթի



Վանի ամրոցի
ժայռափոր այրերից



Վանի Ս. Տիրամայր
եկեղեցին



Վանի Ս. Վարդան
եկեղեցին



Վան բերդաքաղաքի Ս. Պողոս եկեղեցին



Վանի Մեծ մզկիթի,
Երուսաղեմի Ս. Հակոբ վանքի, երբեմնի
Ս. Սիոն եկեղեցու համեմատականը



Վանի Այգեստանների Արարքի
հրապարակը



Վանի Ավանցի նավահանգիստը

քայլը իրար հավասար 3,6 մ չափի են: Աղոթասրահը հատակագծում քառակուսի է, որի կողային երկրարությունը համապատասխանում է սյունասրահի երեք թռիչքին: Ինչպես ութանիստ գմբեթը, այնպես և ողջ ներսույթը ստալակտիտավոր մշակում ունեն: Որքան էլ փվյալ կառույցը Էռնեստ Դիցը և Օկտայ Ասլանափայը համարում են մահմեդական մզկիթաշինության կենտրոնագմբեթ համակարգերի անցումային նախատիպերից մեկը[39], այն միջնադարյան շինարվեստի զարգացման օրինաչափություններից պարամիտում է և բնագրում հայկական ճարտարապետության առանձնահատկություններով կառույց է: Փաստորեն, Վանա Մեծ մզկիթը վերափոխվել է քաղաքամիջի՝ Գագիկ Արծրունու կողմից Ժ. դարում կառուցված Ս. Սիոն եկեղեցուց: Համակառույցի բարձր ճարտարապետական արժանիքների մասին վկայում է դրա՝ Թովմա Արծրունուն շարունակողի կողմից նկարագրված լինելու հանգամանքը: Արդարեւ, պատմիչը միայն անդրադառնում է Գագիկ Արծրունու շինարարական սխրագործություններին, որոնք թվով երեքն են՝ Աղթամարի Ս. Խաչը, Աղթամարի պալատը և Վանի Ս. Սիոն երբեմնի Մայր եկեղեցին:

Այսպես, Վանա ամրոցում և քաղաքամիջում եղել են՝ Ս. Գեւորգ, Ս. Սիոն, Ս. Պողոս եւ Ս. Պետրոս, Ս. Սահակ եւ Ս. Ստեփանոս, Ս. Էջմիածին կամ Ս. Նշան, Փոքր Ծիրանավոր, Ս. Տիրամայր եւ Ս. Վարդան եկեղեցիները: Այգեստաններում եղել է եւս վեց եկեղեցի, որոնք ժառանգորդաբար շարունակում են բերդաքաղաքի եկեղեցիների ճարտարապետական առանձնահատկությունները:

**Հայկավանից Ս. Աստվածածին եկեղեցին** սովորաբար անվանվում էր՝ Հայկավանք, Յոթ խորան ժամ, Հանգուցեալ վանք կամ Օթեվանք[40]: Եկեղեցին ու նրա հարակից դպրոցը գտնվել են համանուն արվարձանի գերեզմանատան կողքին, թաղամասի կենտրոնում եղած հրապարակի վրա: Գ. Շերենցը այն վերագրում է ԺԱ.-ԺԲ. դարերին[41]: Մինչդեռ Հ. Լինչը Հայկավանքը համարում է Վանա հնագույն եկեղեցին՝ առանց սահմանելու հիմնադրության դարերը[42]: Վավերագրական առաջին հիշատակությունը եկեղեցու մասին ոմն Տեր Հարությունի կատարած 1731 թվակիր վերակառուցման առթիվ է[43]:

Հայկավանքի գավիթը արտաքինից ուղղանկյուն, ներքուստ չորս կենտրոնական հենարաններով եւ ութ՝ 2 մ ցցվածությամբ որմնամույթերով եռանավ բազիլիկ է: Եկեղեցու արեւելյան սրահը փայտյա պատնեշով բաժանվել է աղոթասրահից եւ ծառայել որպես դպրաց դաս: Եկեղեցու կողային պատերը կամարակալ են: Կենտրոնական նավը ծածկված է երեք հաջորդական հազարաշեն երդիկներով: Դրանք, բացի քարակերտ չորս հենարանները, ներքին մակերեւույթներին կից ունեցել են նաեւ փայտյա նեցուկներ: Եկեղեցու տանիքը եղել է հողաշեն՝ Վանա տարածքին բնորոշ համապատասխան երդիկային բացվածքներով:

39 Տե՛ս **H. F. B. Lynch,** նշվ. աշխ., հտ. 2, էջ 131, 132, 152 եւ պլանշետ 61. հմմ. **E. Diez, O. Aslanapa,** *Turk Sanaati* (Թուրքական արվեստ), Ստամբուլ, 1955, էջ 302 (թուրքերեն):

40 Տե՛ս **Հ. Համազասպ Ոսկեան**, Վան Վասպուրականի վանքերը, հտ. Ա., Վիեննա, 1940, էջ 248:

41 Տե՛ս **Գ. Շերենց,** նշվ. աշխ., էջ 29:

42 Տե՛ս **H. F. B. Lynch,** նշվ. աշխ., հտ. 2, էջ 101:

43 Տե՛ս **Ե. Լալաեանց,** Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, էջ 52:

**Արարքի Ս. Աստվածածին եկեղեցին կամ Այրիարույցը** գտնվել է Այգեստանների հարավային կողմում եղած համանուն հրապարակում: Այն անկանոն պարագծով կառուցապատված առևտրական հրապարակի գլխավոր շենքն է: Եկեղեցու շրջապատում, հրապարակի պարագծով եղել են արհեստավորական, մանրավաճառքի և այլ բնույթի խանութներ, ձիթհաններ, գինետներ և այլն: Հրապարակի համայնապատկերը լրացրել են կանոնավոր դասավորության ձիասայլերի շարքերը: Արարաքի Ս. Աստվածածնի գոյություն ունեցող համակառույցը 1883-84 թթ. ընդարձակվել և վերածվել է գմբեթավոր եկեղեցու: Համալիրը բաղկացած է եղել զանգակատնից, ընդարձակ գավթից, ձիթհանից, հնձաններից և գլխավոր տաճարից: Եկեղեցուն կից եղել է ճարտարապետ Պ. Թազվորյանի նախագծած երկհարկանի դպրոցը[44]: Զանգակատունը, գավիթն ու եկեղեցին միասնաբար ունեցել են 45 մ երկարություն և 17 մ լայնություն[45]: Այսպես, հիմք ընդունելով նշված չափերը, ստացվում է, որ Արարքի Ս. Աստվածածինը գմբեթավոր բազիլիկ տիպի հորինվածք է, ընդորում, գմբեթի թռիչքը եղել է 7 մ, իսկ կողային նավերի լայնությունը՝ 4 մ: Նույնպիսի չափեր կարելի է վերագրել նաև կենտրոնում 4 սյուներով լուծված գավիթին: Եկեղեցին ունեցել է կանանց հատկացված վերնատուն, խորանի երկու կողմերում ավանդատներ և այլն[46]:

**Հայնկույսների Ս. Աստվածածին կամ Այգեստանների փոքր եկեղեցին** գտնվել է տարածքի հյուսիսարևելյան համանուն թաղամասում՝ Հայնկույսներ գետի ձախ ափին, ուրարտական հողաբերդի ստորոտում: Համաձայն վանեցիների հաղորդած տեղեկությունների՝ եկեղեցին հիմնադրվել է Ժ. դարում[47], մինչդեռ կրոնական ավանդույթն այն վերագրում է Վարդ Պատրիկի ժամանականերին: Այսինքն՝ եկեղեցին կառուցվել է Ը. դարում Վարագա լեռան շրջապատում երևացած հրեղեն սյուներից մեկի տեղում: Առաքել Դավրիժեցու հաղորդմամբ՝Հայնկույսների Ս. Աստվածածինը, ԺԳ. դարից մինչև Վանա 1648 թ. մեծ երկրաշարժը, վանք է եղել իր բոլոր հարմարություններով[48]: Ավելի ուշ՝ 1762, 1802, 1860 և 1890 թթ. եկեղեցին բազմիցս վերակառուցվել է[49], իսկ 1896 թ. հիմնովին ավերվել է, և տեղում մնացել է գմբեթավոր փոքր եկեղեցի, որը Մեծ Եղեռնի տարիներին հարևան դպրոցի հետ հրկիզվել և հավասարեցվել է գետնին:

ԺԹ. դարի տվյալներով Հայնկույսների Ս. Աստվածածինը եղել է գմբեթավոր, խորանային ցածր բեմով, փայտաշեն տանիքով եկեղեցի: Քարաշեն գմբեթի առկայությունը ցույց է տալիս եկեղեցու պիլոնավոր կամ կենտրոնում չորս սյուներով հորինվածք ունենալը: Հասած միակ լուսանկարում գմբեթը արտաքուստ ութանիստ է՝ութ առանցքային լուսամուտներով: Եկեղեցու գավիթը արտաքինից ուղղանկյուն է և կենտրոնական մասում ունի կանթեղանման զանգակատուն[50]: Եկեղեցին և գավիթը միասնաբար ցան-

44 Տես **Գ. Շերենց**, նշվ. աշխ., էջ 32-34:
45 Տես **Երվանդ Տէր Մկրտիչեան**, Վասպուրականի զանձերը, Պոստոն, 1966, էջ 159:
46 Հմմ. **Գ. Շերենց**, նշվ. աշխ., էջ 34:
47 Տես անդ, էջ 65:
48 Տես **Առաքել Դավրիժեցի**, նշվ. աշխ., էջ 492:
49 Տես **Խ. Լեռնեան**, Վանքեր, «Բիւզանդիոն»,1904, թ. 2482:
50 Տես **H. A. Layard**, *Discoveries in the ruins of Nineveh, Babylon with travels in Armenia*, London, 1853, էջ

կապակցված են եղել: Պարսպին հարակից եղել են Խրիմյան Հայրիկի նախաձեռնությամբ կառուցված հյուրասենյակներ եւ համանուն դպրոցի մի քանի դասարաններ:

**Վերին Նորաշենի Ս. Աստվածածին կամ Մեծ Ծիրանավոր (Կարմիր) եկեղեցին.** գտնվել է մի քանի հարկանի տների միջավայրում՝ Այգեստանների կենտրոնի համանուն թաղամասում: Այն 1830 թ. կառուցվել է տեղում գոյություն ունեցող մի մատուռի վրա: 1865-1870 թթ. եկեղեցուն կից ավելացվել են կանանց համար նախատեսված մի մատուռ եւ ուսումնարան[51]: Նորաշենի Ս. Աստվածածինը՝ իր զույգ փայտաշեն գմբեթներով, եղել է Այգեստանի ամենագրավիչ եկեղեցին[52]:

**Ստորին Նորաշենի «Ս. Հակոբ առանց փաճարի» եկեղեցին եւ «Թուխ Մանուկ» վկայարանը,** իրարից փոքր հեռավորությամբ, գտնվել են թաղամասի արեւմտյան մասում՝ Այգեստանների հյուսիսային հատվածում: Ս. Հակոբ եկեղեցին կառուցվել է 1639 թ.: Եկեղեցին մինչեւ ԺԹ. դարի ավարտը բազմիցս վերակառուցվել է եւ համալրվել նախակրթական դպրոցով: Թուխ Մանուկ վկայարանը, կառուցված լինելով ԺԳ. դարում, ԺԹ. դարում կիսավեր վիճակում ծառայել է որպես մոմավառության վայր:

Վանա շրջակայքում եղել են երեք սրբավայրեր եւս: Դրանք անմիջապես ներգրավված են եղել քաղաքի կյանքում: Այդ սրբավայրերն են՝ Կարմրվոր Ս. Աստվածածինը, Ներքին ու Վերին Վարագավանքերը:

**Ներքին Վարագավանքը** հայկական վանական համալիրների ինքնատիպ օրինակներից է: Այն մատենագրական աղբյուրներում եւ վաղագիր գրականության մեջ հանդիպում է նաեւ՝ Վարագավանք, Վարագա Ս. Նշանի վանք, «Յեղդի կիլիսե» (յոթ եկեղեցի), Վարագա Ս. Խաչի վանք, Ներքին կամ Ստորին Վարագավանք՝ տարբերելու այն ոչ հեռու գտնվող Վերին Վարագավանքից:

Վան քաղաքից 15 կմ հարավարեւելք ձավալվող Վարագա սարը մի նեղ ձորակով բաժանվում է արեւելյան՝ վերին եւ արեւմտյան՝ ներքին (դեպի Վան քաղաքի կողմը) տարածքների: Վերջինիս արեւմտյան ստորոտում գտնվում են երբեմնի հայկական վանական կենտրոններից մեկի՝ Վասպուրականյան Վարագավանքի մնացորդները: Վանքի տեղանքը հրաշագեղ մի հովիտ է, որ մի կողմից բացվում է դեպի ձորակը, իսկ մյուս ուղղությամբ՝ դեպի Վան քաղաքն ու կապուտակ Վանա լիճը: Վայրը 1800 մետրով բարձր է ծովի մակերեւույթից: Աշխարհագրական կոորդինատներն են 38° 26 - 43° 26:

Վարագավանքը կազմված է եղել մի բակի շուրջ խմբավորված արեւելյան եկեղեցական համալիրից, հյուսիսարեւելյան «Եղեմ» կոչված հանգստարանից եւ վանական բակի արեւմտյան եւ հարավային պարագծով երկարող երկհարկ սենյակներից, որ ընդգրկում էին վանական խցերը, ժառանգավորաց, ծխական դպրոցները, եպիսկոպոսարանը եւ այլ օժանդակ սենյակներ: Վանքի գլխավոր մուտքը գտնվել է համալիրի հարավարեւմտյան կողմում: Մուտքին կից եղել են վանական գոմն ու փարախը:

Վարագավանքի հիմնադրության վերաբերյալ տեղեկությունները ավանդապա-

58:

51 Տե՛ս **Երվանդ Տէր Մկրտիչեան**, նշվ. աշխ., էջ 162:

52 Տե՛ս **H. F. B. Lynch,** նշվ. աշխ., հտ. 2, էջ 102:

տումներ են: Դրանցից մեկը վանքի հիմնադրումը վերագրում է Գրիգոր Լուսավորչին: Տվյալ վարկածը հիմնավորվում է տեղում գտնված սեպագիր և հունատառ արձանագրություններով: Այսինքն՝ Վարագավանքը քրիստոնեական տաճարի վերափոխված հեթանոսական մեհյաններից էր: Վանքի հիմնադրության մյուս տեղեկությունը առնչվում է Հռիփսիմյանց կույսերին, որոնք, համաձայն Մովսես Խորենացուն վերագրվող «Պատմութիւն Հռիփսիմեանցի», այստեղ բերել են Քրիստոսի խաչափայտի նշխարներից ու հիմնադրել են Վարագավանքը: Մի այլ ավանդապատում է Վասպուրականում Զ. դարում «Հրեղեն սյուների» հայտնության հրաշքը, որոնցից մեկի տեղում Է. դարում հիմնադրվել է Վարագավանքը[53]: Փաստորեն, գոյություն ունեցող աղբյուրների մեծամասնությունը հակվում են այն վարկածին, որ Ներքին Վարագավանքը հիմնադրվել է Վերին Վարագավանքից հետո. այն Է. դարում արդեն գործող կենտրոն էր, և Ը. դարում Տաճատ կրոնավորը գրել է վանքի հարյուրամյա պատմությունը:

Թ. դարում Վարագավանքը գրավել են Ութմանիկները: Մի փոքր ուշ՝ 860-870 թթ., այն վերագրավել է Աշոտ Արծրունին: Նշված ժամանակներում վանքը կրոնական հաստատություն էր բոլոր արքուսարքով, իսկ Գագիկ Արծրունու օրոք բոլորում էր ծաղկուն ժամանակաշրջան: Այդպիսին էլ վանքը հիշատակում է Թովմա Արծրունին[54]: 912-922 թթ. Մլքե թագուհին վանքին նվիրաբերել է իր անունով հայտնի նշանավոր ավետարանը, որտեղ հիշատակագրվել է, որ նա կառուցել է տվել վանքի Ս. Աստվածածին կենտրոնագմբեթ եկեղեցին:

Արծրունյաց Անանուն պատմիչը տեղեկացնում է, որ Սենեքերիմ Արծրունի թագավորը (940-980 թթ.) վանքում կարևոր շինարարական աշխատանքներ է կատարել, և 981 թ. նրա կողակցի՝ Խուշուշ թագուհու հովանավորությամբ կառուցվել է վանքի Ս. Սոփիա եկեղեցին[55]: Այդ մասին վկայում է նաև եկեղեցու արևմտյան պատի վրա պահպանված վիմագրությունը:

Վանքը, մինչև ԺԱ. դարի ավարտը, պահպանել է իր կարևոր նշանակությունը: Սակայն անբարենպաստ պայմանների պատճառով, այնտեղ պահվող խաչափայտի մասունքը ԺԲ. դարում տարվել է Եդեսիա: Մոնղոլական և ավելի ուշ՝ պարսկա-թուրքական ընդհարումների ընթացքում Կարապետ վարդապետի նախաձեռնությամբ վանքում կատարվել են ամրացման աշխատանքներ: Վանա մեծ շարժին՝ 1648 թ., Վարագավանքի եկեղեցիներից 5-ը ավերվելով՝ անմիջապես վերակառուցվել են Կիրակոս վարդապետի ջանքերով: Ելնելով երկրում տիրող պայմաններից՝ տվյալ վերակառուցումն իրավիճակը կայունացնող բնույթ է կրել, և վերակառուցված եկեղեցիների ծածկերի տարածական ձևերը մոնումենտալ ճարտարապետության պահանջներին չեն համապատասխանում: Տվյալ վերշինության ընթացքում Ս. Խաչ և Ս. Սիոն եկեղեցիները վերափոխվել են վանական մատենադարանի և տնտեսական շտեմարանի: Հայոց Հայրիկի վանահայրության տարիներին հաստատությունը շենացել է, վանքում հիմնադրվել են՝ առաջնոր-

53 Տե՛ս «Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 278-280:

54 Տե՛ս «Թովմայ վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 214:

55 Տե՛ս անդ, էջ 306:

դարան, դպրոց, ուսումնարան, փպարան եւ այլ կենցաղային հարմարություններ: 1803 թ. հիմնովին վերաշինվել է նաեւ վանքի շրջապարիսպը:

Վարագավանքը մեծ չափով տուժել է համիդյան եւ երիտթուրքական բարբարոս ավերածություններից: Մեծ Եղեռնի տարիներին վանքը ավերվել եւ ամայացել է: Մեծ Եղեռնից հետո կիսավեր կառույցներում ապաստանում են քուրդ ընտանիքներ: 2011 թ. երկրաշարժից վանքի ավերակները ավելի խաթարվել են, եւ տեղում ներկա դրությամբ ավերակույտ է:

Դատելով վանքի հիմնադրման ավանդույթից, ինչպես նաեւ եկեղեցիների փիպաբանական, հորինվածքային եւ շինարվեստի առանձնահատկություններից՝ Ս. Նշանը համալիրի վաղ միջնադարյան առաջին կառույցն է: Գագիկ Արծրունու օրոք դրան կից կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցին: Ժ. դարի 80-ական թվերին համալիրի կազմում ավելացել են Վասպուրականում նախասիրված զույգ համադրությամբ տաճարային տիպին պատկանող Ս. Հովհաննես եւ Ս. Սոֆիա եկեղեցիները, որոնք վարպետորեն լրացնում են վանքի համակառույցը: Վարագավանքի համալիրի կազմում նույնպիսի վարպետությամբ կապարված հավելում է ԺԱ. դարագլխին կառուցված Ս. Գեւորգ անունը կրող գավիթը: Վերջինի հյուսիսային եւ հարավային կողերին ավելացած երկու կառույցները եւ նարթեքս-զանգակատունը ուշ միջնադարյան հավելումներ են:

Վարագավանքի եկեղեցական հատվածը հյուսիսից-հարավ անցնող ուղղագիծ միջանցքի շուրջ դասավորված համադրություն է: Միջանցքի հարավային կողմում են Ս. Սոֆիա եւ Ս. Հովհաննես տաճարները, իսկ հյուսիսային կողմում նարթեքս-զանգակատանը հաջորդող Ս. Գեւորգ եկեղեցին՝ իրեն հարակից Ս. Սիոն եւ Ս. Խաչ եկեղեցիներով, ինչպես նաեւ դեպի արեւելք ու հյուսիս-արեւելք տեղադրությամբ Ս. Աստվածածին եւ Ս. Նշան եկեղեցիները:

**Ս. Նշան մատուռը** 10 x 2.5 մ արտաքին չափերով, երկսրահ, թաղակապ կառույց է, որ հարավարեւմտյան անկյունում ունի 2 x 1 մ ներքին չափերով ավանդատուն: Խորանը 2,8 մ բացվածքով կիսաշրջան է: Եկեղեցու սրահներն իրար են միանում թաղակամարներով: Ինչպես պիլոնները, նույնպես եւ որմնամույթերը հատույթում լուծված են ասպիճանաձեւ ուրվագծով: Հ. Համազասպ Ոսկյանի նյութերում նշվում է եկեղեցու փայտաշեն գմբեթ ունենալը, որ փոխարինել է դրա երբեմնի քարաշեն գմբեթին[56]: Սակայն Վարագավանքի հայտնի հատակագծերում[57] Ս. Նշանի ծածկը անխտրաբար ցույց է տրված որպես թաղակապ առաստաղ, եւ ըստ ԺԹ. դարի լուսանկարների, Ս. Նշանի տանիքը հարթ է: Եկեղեցու արտաքին պատերի հաստությունը 1.2 մ է: Ներսույթի բնական լուսավորությունը հայթայթում են խորանի, հարավային եւ արեւմտյան կողմերի առանցքային նեղ լուսամուտները: Ս. Նշանը հարավարեւմտյան անկյունում եղած անցումով կապվել է Ս. Աստվածածին եկեղեցուն: Առանձնապես ուշագրավ է եկեղեցու մուտքի դռան փեղկերի խաչքարային մոտիվներով կապարված ձեւավորումը:

---

56 Տե՛ս **Համազասպ Ոսկեան**, նշվ. աշխ., հտ. Ա, էջ 274:

57 Տե՛ս **Ներսէս Սարգիսեան**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864. **Ե. Լալաեանց**, Վասպուրականի նշանաւոր վանքերը. «Ազգագրական հանդէս», 1911թ., էջ 57-76. **W. Bachman,** նշվ. աշխ., էջ 33-40. **Joseph Strzygowski**, *Die Baukunst der Armenier und Europa*, Wien, 1918, vol. 1, էջ 83-84. **J. M. Thierry**, *Monasteres Armeniens du Vaspurakan*, REArm., 1969, p.141-180. **Paolo Cuneo,** նշվ. աշխ., հտ. 1, էջ 538-542:

**Ս. Աստվածածին եկեղեցին** արտաքինից 11.2 x 14.2 մ չափերի ուղղանկյուն, ներքուստ քառախորան, չորս անկյունային ավանդատներով, կենտրոնագմբեթ-տրոմպավոր տաճար է: Գմբեթատակ քառակուսու կողմը 6 մ է: Խորանները բացվածքում 3.5 մ են: Հարավային եւ հյուսիսային խորանների խորությունը 1.5 մ է: Հենց այս հանգամանքով է պայմանավորված տաճարի արեւելք-արեւմուտք ձգված համաչափությունը: Գլխավոր խորանի պատվանդանը 90 սմ է, դրա բեմը հետնաբեմից անջատված է եղել իկոնոստասով: Ուշագրավ է, որ արեւմտյան ավանդատների մուտքերը եկեղեցու կոնքի միջից են եւ ոչ թե համապատասխան տրոմպներից, ինչպես սովորաբար ընդունված է հռիփսիմեատիպ տաճարներում: Նշելու հանգամանք է, որ Ս. Աստվածածին եկեղեցու չորս տրոմպներն ու չորս ավանդատները գմբեթի նկատմամբ ունեն հավասարահեռ տեղաբաշխում: Տրոմպները զետեղված են գմբեթատակ քառակուսու անկյունագծերով, իսկ ավանդատները՝ եկեղեցու արտաքին ուղղանկյուն պարագծի առանցքներով:

Ս. Աստվածածին եկեղեցու ներսույթի լուծումը զուսպ է եւ վերձիգ: Ինտերիերի ձեւավորումը կատարվել է շենքի բաղկացուցիչ մասերի քիվային ջլատման սկզբունքով: Քիվերից գլխավորը անցնում է գմբեթի թմբուկի ստորին օղակով: Այն, ըստ էության, համադրում է լուսավոր գմբեթը դահլիճի կիսախավար տարածության հետ: Եկեղեցու դահլիճի հարավային պատին ագուցված է Հովասափ վարդապետի 1301 թ. կատարած վերակառուցման արձանագրությունը կրող նրբաճաշակ խաչքարը, որ բարի ձեռքերի օգնությամբ, մինչեւ Վանում տեղի ունեցած վերջին երկրաշարժը, տեղափոխվել էր ավերակ եկեղեղեցու հյուսիսարեւելյան ավանդատան ներսը: Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթը աղյուսաշեն է եւ հիշատակարանային տեղեկության համաձայն, վերջին անգամ վերակառուցվել է 1647-1648 թթ.: Դատելով հասած լուսանկարներից՝ ինչպես Ս. Նշանում, այստեղ եւս ԺԷ. դարի ետերկրաշարժային վերակառուցումների ընթացքում գմբեթի շուրջ տանիքը բերվել է հարթ տեսքի: Կարելի է ընդգծել, որ տաճարի գմբեթը համալիրում ամենաբարձրն է: Առանձնապես ուշագրավ է եկեղեցու մուտքի քանդակային կատարումը, որտեղ հոծ զույգ գոտիներով շրջանցող ժանյակների կենտրոնում բարավորն ու դրան հաջորդող զարդագոտին կատարված են գեղանկարչական միջամտությամբ:

**Ս. Սոֆիա եկեղեցին** արտաքինից 12 x 20 մ չափերով կառույց է: Մի զույգ հոծ պիլոններ դահլիճը բաժանում են 5.6 x 5.0 մ եւ 5.6 x 5.6 մ չափերով արեւելյան ու արեւմտյան սրահների: Որմնամույթերը պատից առաջացած են 1.6 մ չափով: 4.5 մ բացվածքով խորանը ձգված կողերով կիսաշրջան է, որ խորությամբ 4.0 մ է: Խորանի երկու կողմերում կան 3.5 x 1.7 մ չափերով ավանդատներ: Արտաքին պատերի հաստությունը շուրջ 1.7 մ է: Հավանաբար այս է պատճառը, որ եկեղեցին որոշ աղբյուրներում հիշատակվում է նաեւ «Բերդավոր»: «Արծուի Վասպուրական»-ում լույս տեսած վանքի տարեգրությունում հիշատակվում է Ս. Սոֆիա եկեղեցու արեւմտյան պատին եղած հետեւյալ արձանագրությունը՝ «Բագրատունեաց Գագիկ արքայի դուստր, Սենեքերիմ թագավորի կողակիցն՝ Խուշուշ թագուհին ի թուին 981»[58]: Եկեղեցու ծածկի եւ տանիքի լուծումների վե-

58 «Տեսարանք Հայրենի աշխարհաց», Մայրաքաղաք մենաստանաց Վարագ. «Արծուի Վասպուրական», 1858, թ. 1, էջ 46:

բաքերյալ տեղեկությունները դեռևս սուղ են: Ճարտարապետական մանրամասներից կարելի է նշել տաճարի խորանային երկբացվածք լուսամուտը: Դատելով տաճարի մնացորդներից՝ դրա ճարտարապետությունը մեծ չափի ընդհանրություններ ունի հյուսիսային կողմից հարակցող Ս. Հովհաննես եկեղեցու հետ:

**Ս. Հովհաննես կամ Քառասուն արեղայից եկեղեցին** արտաքինից 15.6 x 10.9 մ չափերի ուղղանկյուն և ներքուստ եռակոնք գմբեթավոր դահլիճ տիպի կառույց է: Մի զույգ հոծ որմնամույթեր դահլիճը բաժանում են մուտքային և կենտրոնական սրահների: Առաջինը 4.2 x 3.7 մ ներքին չափերով թաղակապ սրահ է, որ ունի 1.8 x 2.0 մ կողային խորացումներ: Եկեղեցու կենտրոնական մասը պարզապես 4.4 մ կողմով գմբեթատակ տարածք է: Խորանը երեք աստիճանների չափով բարձր է դահլիճից: Այն հատակագծում ձգված կողերով կիսաշրջան է, բացվածքը և խորությունը 4-ական մետր: Ավանդատները հատակագծում 3.5 x 1.2 մ չափերով թաղակապ սենյակներ են, որոնց մուտքերով անմիջապես բացվում են հարավային և հյուսիսային կոնքերը: Գմբեթը ներքուստ կլոր և արտաքուստ ութանիստ, 4 առանցքային լուսամուտներ ունեցող թմբուկ-վեղար համակարգ է: Դատելով հասած լուսանկարներից՝ տանիքի լուծումը իր խաչագմբեթությամբ ընկալելի է եղել մինչև ուշ ժամանակները: Այսինքն՝ այն չի վերափոխվել: Ելնելով Ս. Հովհաննեսի ու Ս. Սոֆիայի քիվավորման ընդհանրություններից՝ կարելի է հետևեցնել, որ դրանք ծավալատարածականորեն նման են եղել Ռշտունիքի Նարեկավանքին, Իլուվանքին, Սալնապատ Ս. Գրիգորին, Վանա քաղաքամիջի Առաքելոցին, Գանձակի Ս. Կարապետին և Ս. Աստվածածնին:

**Ս. Գևորգ գավիթը** մուտքային նախասրահով մեկտեղ հաջողված հավելում է Վարագավանքի համալիրի կազմում: Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի, Սենեքերիմ թագավորի և իր կողակցի դամբարանաքարերի գավիթում գտնվելու փաստը հաստատում է, որ շենքը կառուցվել է նախքան ԺԱ. դարի 20-ական թվականները: Գավիթը արտաքուստ 14.0 x 14.5 մ չափերով կենտրոնական չորս սյուներով լուծված գմբեթավոր կառույց է: Գլխավոր մուտքը հաջորդում է արևմտյան եռակամար անեքսին կամ դարպասին: Մի այլ մուտք՝ հյուսիսային պատի արևմտյան անկյունում տանում է դեպի հարակից Ս. Խաչ եկեղեցին, որ վերջին դարերում ծառայել է որպես վանքի մատենադարան: Հյուսիսային պատի արևելյան անկյունում է եղել խորշ մկրտարանը: Ներսույթի ճակատների որոշ հատվածները և կենտրոնական սյուների մակերեսները որմնանկարված են: Վարպետորեն կատարված որմնանկարները պատկերում են վանքի հիմնադրության հետ առնչվող դեմքերն ու իրադարձությունները: Գավիթից դեպի Ս. Աստվածածին եկեղեցին տանող մուտքը գտնվում է արևելյան կողմում: Ներսույթի տվյալ ճակատը նկատելիորեն տարբեր է մյուսներից: Ակնարկվող մուտքից վերև բոլորվող պարզակները, տեկտոնիկայով հարազատ մնալով հանդերձ գավիթի սյուներին, մուտքի աստիճաններով կազմված պատվանդանով, բացվածքի ձևերով ու կողային որմնախորշերով ավելի վաղ շրջանի ճարտարապետական առանձնահատկություններ ունեն: Իր գեղարվեստական լուծումներով ուշագրավ է գավիթի Ս. Խաչ մատենադարանը տանող մուտքը: Այն ունի երեքնուկաձև բացվածք, որ պարագծային շրջանցող քիվային գոտիներում

համադրված է երկգույն քարերով: Սյուների խոյակները, բացվածքների ու մկրտարանի խորշը երիզող գալարազարդերի կատարումը հասցվել է ոսկերչական նրբության: Մուտքերի պարագծով անցնող քիվային գոտիների կազմում ընդգրկված յանցեպաձև զարդագծերը միանգամայն նկատելի են իրենց կոպտությամբ: Փաստորեն, գավիթի ճարտարապետությունը ոճականորեն միատարր չէ և առանձին մասերով բնորոշ է Ժ.-ԺԱ. դարերին, ինչպես նաև ԺԳ.-ԺԴ. դարերին և ուշ միջնադարյան ժամանակներին: Ս. Գևորգ գավիթի գմբեթը աղյուսաշեն է: Այն ներքուստ կորագծային է և արտաքինից ութանիստ:

**Ս. Խաչ և Ս. Սիոն եկեղեցիները** չափագրական նյութերով այլազան են: Հ. Ներսես Սարգիսյանի տեղագրությունում հրապարակված հատակագծում Ս. Խաչը միանավ, երկու զույգ որմնամույթերի միջոցով երեք սրահների բաժանված, կիսաշրջանաձև խորանով ու դրա երկու կողմերին մեկական ավանդատնով կառույց է: Որմնամույթերի մի այլ զույգ զետեղված է շենքի արևմտյան պատի ներքին մակերևույթին, որտեղից բոլորվում են խաչվող թաղակամարներ: Սա նշանակում է, որ սրահի ծածկը կենտրոնական մասում բացվածք ունի: Իրոք, ակնարկվող մասի արխիվային լուսանկարներում պարզորոշ երևում է փոքր չափերի գմբեթի կանթեղի գոյությունը: Ինչ վերաբերում է Ս. Սիոն եկեղեցուն, այն Ն. Սարգիսյանի նշված հատակագծում ցույց է տրված որպես քիչ ցցվածություն ունեցող թևերով խաչաձև թաղակապ կառույց: Եկեղեցու խորանը, ինչպես Ս. Խաչում, այստեղ ևս կիսաշրջանաձև է:

Համաձայն Ե. Լալայանցի վերևում հղված չափագրության՝Ս. Խաչ և Ս. Սիոն եկեղեցիները ուղղանկյուն հատակագծով քարաշեն սենյակատիպ շենքեր են: Դրանք նույն ձևով պատկերվել են նաև Վ. Բախմանի, Ժ. Ստրզիգովսկու վերևում հղված աշխատություններում: Փաստորեն, երկու կառույցներն էլ ԺԹ. դարի վերջին տասնամյակներին կատարված ինչ-որ վերակառուցման ընթացքում աղավաղվել են և կորցրել իրենց բնագիր լուծումը:

Ժ. Մ. Թիերրիի և իտալական վերևում հղված հրապարակություններում տեղ գտած Վարագավանքի հատակագծերում Ս. Խաչ եկեղեցին նման է Ն. Սարգիսյանի աշխատությունում եղած հատակագծին, բայց համաչափությամբ այն միանգամայն տարբեր է: Ակնարկվող երկու եկեղեցիների մանրակրկիտ մի չափագրություն ևս կա, որ կրում է Ռ. Դուֆտիի մակագրությունը[59]: Այս փաստաթղթում ակնարկվող եկեղեցիների հատակագծերը նույնպես ցույց են տրվել միանավ, եռասրահ և արտաքինից ուղղանկյուն: Հարկավոր է նշել, որ Ռ. Դուֆտիի չափագրությունն իր համաչափություններով նույնպես մոտ է Ն. Սարգիսյանի հրապարակածին: Ամփոփելով կարելի է ամրագրել, որ Վարագավանքի եկեղեցիները բնագրում կառուցվել են հստակ տիպերով: Դրանցից Ս. Աստվածածին եկեղեցում նկատելի են հռիփսիմեատիպ և աղթամարատիպ տաճարների անցումային առանձնահատկություններ: Մի հանգամանք, որը նկատելի է նաև Վասպուրականի Արճեշի Արծվաբերի և Իլուվանքի օրինակներում: Ս. Նշանը, Ս. Խաչը ու Ս.

59 Տես **R. Dufty**, *Measurements, Kurtwald Institute Archives*, թ. 644:

Սիոնը թաղակապ բազիլիկներ են, մինչեռ Ս. Հովհաննեսն ու Ս. Սոփիան՝ գմբեթավոր դահլիճներ: Տաճարներն ուշ միջնադարյան վերակառուցումների ընթացքում նյութական անցողիկ պայմանների կապակցությամբ կորցրել են իրենց վաղնջական մասերի բնագիր կերպվածքը: Ներքին Վարագավանքի համալիրը կարելի է դասակարգել որպես գծային դասավորությամբ կառույցներից կազմված հորինվածք: Հայկական ճարտարապետության մեջ դրա զուգահեռներից են՝ Ամաղուի Նորավանքի համալիրը, Վանեվանը, Բարձրաքաշ Ս. Գրիգորը, Հառիճի վանքը, Ցաղացքարը, Կեչառիսը, Եղիշ Առաքյալի վանքը, Մշո Ս. Կարապետի վանքը, Եղերդուտը եւ այլն:

**Վերին Վարագավանքը** ավերված վիճակում գտնվում է Ներքին Վարագավանքից հյուսիս-արեւելք: Տեղանքի բարձրադիր դիրքի համար վանքը անվանվել է Վերին Վարագավանք: Երկու Վարագավանքերը միասնաբար ունեցել են 10 եկեղեցի: Վերին Վարագավանքի ընդարձակումը կատարվել է երեք փուլերով: Սկզբում այն ունեցել է Հռիփսիմյանց կույսերի կողմից հիմնադրված Ս. Աստվածածին եկեղեցին: Թ.-Ժ. դարերում տեղում կառուցվել է Ս. Փրկիչ եկեղեցին: ԺԲ.-ԺԳ. դարերում երկու եկեղեցիները լրացվել են վանական խցերով եւ վերածվել անապատի:

Վերին Վարագավանքի տեղում նշմարվող պարսպի հետքերը զբաղեցնում են 45 x 45 մ հողատարածություն, որ տեղանքի անհարթության հետեւանքով հյուսիսարեւելյան անկյունում ունի շեղակիությամբ հատված պարագծային տեսք: Վանքի գլխավոր մուտքը գտնվում է արեւմտյան կողմի՝ հյուսիսից հարավ ձգվող պարսպի կենտրոնական մասում: Մուտքից հարավարեւմուտք նշմարելի է 15 x 20 մ չափերի մի ուրիշ օժանդակ բակ եւս: Հյուսիսային կողմից մուտքին հարակից է միեւնույն չափերով մի անցում եւս, որ տանում է դեպի վանքի պարսպի հյուսիսարեւմտյան անկյունում տեղադրված 10 x 20 մ չափերի երրորդ բակը: Ըստ երեւույթին, նշված երկու բակերը ծառայել են տնտեսական նպատակների: Հետքերից է 8 x 9 մ չափերով նախամուտքը, որ հարավային կողմից մեկ այլ՝ 5 x 5 մ չափերով սենյակի միջոցով կապվում է վանական խցերին եւ հաջորդաբար, դեպի արեւելք անցում է տալիս Ս. Աստվածածին եւ Ս. Փրկիչ եկեղեցիների մուտքերին: Նախամուտքը, որ բաշխիչ դեր է կատարում համալիրի գործառական կառուցվածքում, արեւելյան կողմից անմիջապես տանում է դեպի վանքի ընդարձակագույն հյուսիս-արեւելյան՝ 30 x 35 չափերով բակը: Վանքի անկյունագծային առանցքի վրա է Ս. Գրիգոր մատուռը: Վերին Վարագավանքի նկարագրված բաժանումները միանգամայն ցույց են տալիս դրա ապաշխարության, ճգնավորական կենտրոն լինելը:

**Վերին Վարագա Ս. Աստվածածին տաճարը** արտաքուստ 13 x 13 մ չափերով կենտրոնագմբեթ եռակոնք տաճար է: Ներսույթը 12 x 12 մ չափերի քառակուսի է, որ կողային ուղղություններով ավարտվում է առանցքային տեղադրությամբ եւ 3 մ բացվածք ունեցող խորաններով: Գլխավոր խորանը հատակագծում ձգված կողերով կիսաշրջան է, որ բացվածքում մնալով կողային խորանների չափերով, խորությամբ 2.4 մ է: Խորանի տրամագիծը հավասար է դահլիճի չափերին: Ուշագրավ են տաճարի ոչ սովորական հաստահեղույս պատերը, որոնք տատանվում են 2.6-4 մ միջեւ: Սա մտածել է տալիս, որ տաճարի եռակոնք եւ գմբեթավոր հորինվածքը հետագա վերափոխման արդյունք է:

**Վերին Վարագա Ս. Փրկիչ եկեղեցին** արտաքինից 12 x 16 մ չափերով գմբեթավոր դահլիճ է: Մի զույգ՝ 2 մետրի հասնող որմնամույթեր դահլիճը բաժանում են արեւմտյան եւ կենտրոնական սրահների: Տաճարի կողային մասերում որմնամույթերի ցցվածության համապատասխան կան մեկական զույգ կամարակապ որմնախորշեր: Միջորմնամույթային հեռավորությունը, ինչպես նաեւ գմբեթի տրամագիծը 4 մ է: Եկեղեցու երկայնական առանցքի ուղղությամբ արեւմտյան սրահի չափը 2.6 մ է: Խորանային բացվածքը գմբեթատակ քառակուսու անմիջական շարունակությունն է: Այն հատակագծում ձգված կողերով կիսաշրջան է, որ խորությամբ 4.4 մ է: Ավանդատները անմիջապես բացում են խորանի ներքին տարածքը:

**Ս. Գրիգոր մատուռը** արտաքուստ 6 x 10 մ չափերով երկսրահ միանավ կառույց է: Եկեղեցին անմիջապես հարակից է վանքի նախամուտքին եւ գտնվում է մեծ բակում: Այն նկարագրված երկու տաճարների գավիթից դուրս է: Դա ցույց է տալիս դրսի տուն լինելը: Եկեղեցին կենտրոնական սրահի հյուսիսային պատին ունի մկրտարանային խորշ, որը սկզբունքային կարգով չկա մյուս երկու եկեղեցիներում: Այսինքն՝ Ս. Գրիգոր մատուռը հատկացվել է այցելուների համար: Հարկավոր է նկատել, որ եկեղեցու երկայնական առանցքը 30°-ով շեղված է դեպի հյուսիս՝ քան վանքի մյուս երկու եկեղեցիները: Փաստորեն, նման տեղադրական առանձնահատկություններ ունի նաեւ Ամաղուի Նորավանքի հրաշակերտ Բուրթելաշեն երկհարկ դամբարան-եկեղեցին: Փաստորեն, սա երկրորդ վարկածն է, ըստ որի Ս. Գրիգոր մատուռը կարող է Բուրթելաշենի նման կառույց լինել:

«**Կարմրվոր**» **Ս. Աստվածածին վանքը.** «Վանէն իբր երկու ժամ հեռու է: Շինուած է Վարագայ եւ Զիւաթռնուկ լեռներու լանջին տարածուած հարթավայրի մը վրայ, Շուշանց գիւղի քովերը»[60]: Վանքի հիմնադրությունը ավանդության սահմաններում է, ըստ որի այն՝ «հիմնուեց Թ-ադէոս առաքեալի կողմէ առ Ս. Աստուածամօր»: Առաջին մատենագրական հիշատակությունը վանքի մասին 1511 թ. է: Համաձայն պահպանված վիմական արձանագրությունների՝ վանքը վերանորոգվել է 1617, 1779, 1886 թթ.: Շրջապարիսպը վերաշինվել է 1817 թ.: 1895-1896 թթ. դեպքերին համալիրը ամբողջությամբ հրկիզվել եւ ամայացել է:

«Կարմրվորի» տեղանքը մի սարալանջ է, որ բացվում է դեպի Վան քաղաքի Այգեստանները ու լիճը: Համալիրը կազմված է եղել գլխավոր տաճարից, գավիթից եւ դրա շուրջ եղած պարիսպի հարավարեւմտյան անկյունում դասավորված 15 միաբանական եւ ուխտավորական սենյակներից:

«**Կարմրվոր**» **Ս. Աստվածածին եկեղեցին** արտաքուստ 12 x 12 մ չափերով երկսյուն գմբեթավոր բազիլիկ է: Սյուները հատակագծում 1 x 1 մ են: Խորանը հատակագծում ձգված կողերով 3.5 մ խորությամբ կիսաշրջան է: Խորանի տրամագիծը 3 մ է: Նույնպիսի խորություն ունեն նաեւ 1.5 մ լայնությամբ, խորանի երկու կողմերում եղած ավանդատները: Եկեղեցու առաստաղը համադրված է պայտաձեւ կամարների վրա բոլորվող թաղերից, խորանի գմբեթարդից ու գմբեթային բացվածքից: Գմբեթը ներքուստ

60 **Խ. Լեւոնեան,** Վանքեր. «Բիզանդիոն», Կ. Պոլիս, 1904, թ. 4772:

3 մ տրամագիծ ունի, թմբուկն ու վեղարը ներսից կորագծային են, իսկ դրսից՝ ութանիստ: Տանիքը խաչաձև դասավորությամբ և փոքր բարձրությամբ ճակտոններին համապատասխանող երկթեք լուծում ունի: Ներսույթի լուսավորությունը հայթայթում են մի քանի պարագծային նեղ և թմբուկի 4 լուսամուտները: Եկեղեցու գավիթը 9 x 11 մ չափերով ուղղանկյուն, հողածածկ պարզ կառույց է: Այն բարձրությամբ ավելի ցածր է քան տաճարը և կենտրոնական մասում ունի կանթեղ: Վերջինը՝ 1 մ տրամագծով, 4 սյուներով և ութանիստ վեղարով զանգակատուն է: Ժ. Մ. Թիերրիի հրապարակած հատակագծում գավիթը միաթռիչք է: Սակայն, համաձայն «Ազգագրական հանդէս»-ում[61] և «Արծուի Վասպուրական»-ում[62] հրապարակված հոդվածների, այն հատակագծով նման է եղել եկեղեցուն, ունեցել է 2 զույգ սյուն և ութ որմնամույթ:

**Վան քաղաքի նշանավոր հասարակական շենքերից** կարելի է նշել 1903-1907 թթ. կառուցված Երեմյան վարժարանը, Հայկազյան դպրոցը, Սանդուխտյան իգական դպրոցը, Կենտրոնական վարժարանը, 1911-1912 թթ. կառուցված «Աշխատանքի տունը» (ճարտ.՝ Հ. Քաջազնունի), 1912 թ. կառուցված վարժապետանոցը, քաղաքային բաղնիքը, քաղաքային կառավարատունը, շուկան ու զանազան այլ կառույցներ:

**Վանի ժողովրդական բնակելի ճարտարապետությունը** ներկայանում է երկու հիմնական տեսակներով՝ գյուղական և քաղաքացիական: Վանի շրջապատում եղած բնակավայրերի տները գերակշռող մասով եղել են կիսագետնափոր: Դրանք երբեմն կառուցվել են ամբողջապես անտաշ քարից, երբեմն էլ միայն ստորին մասում մետրաչափ եղել են քարաշեն ու դեպի վերև՝ հողաշեն: Տների լուսամուտները սովորաբար սակավ են և համապատասխանաբար՝ ճակատները խուլ: Տանիքային լուսամուտները Վանա բնակելի ճարտարապետության ժառանգական տարրն են և տեղական բարբառով անվանվել են «հերդիկներ»: Տան ծածկը սովորաբար հենվել է հաջորդական դասավորված գերանների վրա: Տանիքը իրականացվել է վերևից հողաշեն՝ հարդախառն ծեփով և հաջորդաբար ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ շերտի դեր կատարող ճիլի և եղեգի հյուսվածքից: Տանիքները հիմնականում հարթ են և երդիկի մասում բոլորածև ծավալով դուրս ցցված: Արտաքին մակերևույթների սվաղը դրսում հարդախառն ծեփն է, իսկ ներսում՝ կրաշաղախը: Տների կառուցապատումը կցաշար է և որոշ դեպքերում դարավանդաձև: Ըստ Ե. Լալայանցի փաստագրության՝ տները կազմված են եղել սրահից՝ տանտունից, մառանից, փարախից, գոմից ու դարմնոցից[63]:

Սրահը կամ ժողովրդական անվանումով «երեսբացը» (օրսբաց) դեպի տան բակը բացվող պատշգամբն է, որ սովորաբար ծածկված էր լինում կտուրի լանջի շարունակությամբ: Սրա հատակը բակից բարձր էր մի քանի աստիճանով և պարագծով մեկ ունենում էր փայտյա կամ քարաշեն կամարաշար:

Տանտունը՝ գլխատան և սաքուի համադրումից կազմված, բնակարանի գլխավոր

61 **Ե. Լալաեանց,** Վասպուրականի նշանաւոր վանքերը, էջ 77:

62 «Տեսարանք հայրենի աշխարհաց», Կարմրոր Սուրբ Աստուածածնի վանք և Շուշանայ գիւղ. «Արծուի Վասպուրական», 1859, թ. 6, էջ 146:

63 Տե՛ս **Ե. Լալաեանց,** Վասպուրականի ազգագրութիւնը. «Ազգագրական հանդէս», 1910, էջ 120-131:

մասն է, որտեղ գլխատունը բնակարանի երդիկավոր ժառանգական մասն է, իսկ սաքուն կամ օդան՝ հյուրասենյակը եւ նստասենյակը: Տանտունը անմիջապես հարակից էր լինում տան մուտքին, ինչպես նաեւ փակախին կամ փայախին: Օդայի ներսույթի գլխավոր տարրը վառարանն էր կամ մանղալը, որ տան արտաքին ծավալում սովորաբար արտահայտվել է քարաշեն կամ մետաղական փուխերիկով: Փակախն (փարախ) ու գոմն ընտանի կենդանիները պահելու տարածքներն են, որոնք սովորաբար օդափոխվում եւ լուսավորվում էին սենյակների կողմից կամ երդիկից:

Մառանը հատակագծում քառակուսի երդիկավոր մթերանոցն է՝ իրեն կից շտեմարանով, կալնոցով եւ «խացխորով» (հացհոր): Շատ դեպքերում մառանը լինում էր նաեւ օդայի տարածքին հարակից ստորգետնյա սենյակ: Վանա ժողովրդական տան մթերման մյուս տարածքը հարդնոցն էր, որ գյուղական տներում կալնոցին կցված հողաշեն եւ երդիկավոր տնակ էր: Հացհորը կամ ցորենի պահեստը 1-1,5 մ տրամագծով կոնաձեւ պահեստ է, որ շատ դեպքերում բարձրությամբ 3 մ էր լինում: Հացհորերը կարելի է տեսակավորել իրենց տարողությամբ: Մինչեւ 1.5 մ բարձրությամբ հացհորերի բացվածքը վերեւից էր, մինչդեռ 2-3 մ բարձրության դեպքում այն կողային տեղաբաշխում ուներ:

Քաղաքային տները, ի տարբերություն գյուղականի, ունեցել են հետեւյալ առանձնահատկությունները: Պատերը սովորաբար կառուցվել են հում աղյուսից, իսկ հիմնապատերը խոնավությունից մեկուսացնելու համար՝ քարից: Տան կրող պատերը առաջին հարկում կառուցվել են զույգ, իսկ երկրորդ հարկում 1.5 աղյուսից: Տան հիմքերը Այգեստաններում սովորաբար խորացվել են մինչեւ 1 մ: Քաղաքամիջի տների հիմքերը, հաշվի առնելով գրունտի մեկ մետրի հասնող փխրուն շերտը, խորացվել են մինչեւ 2 մ:

Վան քաղաքի համեստ եկամտով ընտանիքների տները իրենց արտաքինով նման են եղել գյուղականներին: Բարեկեցիկ ապրող ընտանիքների կամ Վանա մեծատունների բնակարանները սովորաբար եղել են երկհարկ: Առաջին հարկում դրանք կրկնել են գյուղական բնակարանների հատակագիծը եւ ընդգրկել՝ սրահը, տանտունը, ստորին հարկի մառանները եւ այլ պահեստները: Երկրորդ հարկում տեղաբաշխվել են հյուրասենյակն իր քյոշկով եւ ննջասենյակներն իրենց օժանդակ տարածքներով: Վանա քաղաքային բնակարանները գյուղականներից տարբերվում են բացվածքների մակերեսի մեծությամբ եւ քանակով: Փաստորեն, գյուղական տներում երդիկավոր լուծումը թելադրել է պատուհանների սակավ լինելու հանգամանքը: Նկատելի է, որ գլխատունը կամ տանտունը քաղաքային տներում մեծ մակերես է զբաղեցնում: Բնական է, որ այստեղ փակախին փոխարինել են տղամարդկանց ժամանցի եւ այլ սենյակները, որոնք նաեւ ծառայել են տնայնագործության համար: Որոշ հարուստ վանեցիների տներում եղել են նաեւ տղամարդկանց եւ կանանց իրարից անջատ հյուրընկալման սենյակներ: Այստեղ եւ տան օդայում շատ դեպքերում եղել են նաեւ ճաշարանային խորշեր եւ երեխաների հատկացված խաղալու տարածք: Վանա քաղաքային տների առաջին հարկերում պարտադիր կարգով եղել են վառելանյութ եւ ապաղձ պահելու համար «ցանոցներ»: Հարուստների տներում նախատեսվել են նաեւ պանիր, գինի եւ այլ մթերքներ պահելու համար նկուղ՝ «մաղազաներ»: Խաղողի այգի ունեցող տներում կառուցվել են «շիրա-

խանա» եւ հնձան: Դրանցում սովորաբար տեղադրվել են մի ավազանապիպ պարածք եւ գետնում թաղված կարասներ: Բնակարանների երկրորդ հարկի պարրերից է եղել նաեւ ննջարանների միջեւ երկարող միջանցքը, որ երկու կողմերում ավարտվել է քյոշկով: Բնակարանը հովացնելու եւ օդափոխելու համար միջանցքը ունեցել է հարավհյուսիս երկարող ուղղվածություն:

Կառուցվելուց հետո Վանա տները արտաքինից ամբողջությամբ ծեփվել են հարդախառն կավով եւ ներքուստ սպիտակացվել են գաջի շաղախով: Սենյակների հատակներն ու առաստաղներն իրականացվել են տախտակամածով, որոնք ըստ սովորույթի չէին ներկվում: Տներում հաճախակի էր դեկորատիվ նպատակով փայտյա մասերի ներգրավումը եւ դրանց ներկումը զանազան գույներով: Վանում եղած բոլոր հասարակական շենքերն ու բնակելի տները Մեծ Եղեռնի դեպքերից հետո յուրացվեցին թուրքերի կողմից: Այսօր դրանք գրականության մեջ ներկայացվում են խեղաթյուրված անվանումներով կամ յուրացնողների անուններով: Ժողովրդական բնակելի տան հետաքրքիր նմուշները, որոնք ներգրավվել են թուրք հեղինակների ուսումնասիրություններում, թվով չորս տասնյակ են: Դրանք իրենց նկարագրով միանգամայն համապատասխանում են վերեւում ներկայացված լուծումներին: Այսինքն՝ տարածական եւ հատակագծային հորինվածքով սիմետրիկ եւ երկհարկ են: Սիմետրիայի առանցքի վրա տեղադրված է մուտքը եւ վերին հարկի դուրս կախված քեոշկը: Լուսամուտները մետրիկ դասավորությամբ են եւ ըստ ձեւաբանական անհրաժեշտության վերեւից ուղիղ, կամարակապ կամ ֆրոնտոնաձեւ երեսակելներ ունեն: Ճակատների հորիզոնական մասնահատման տարրերից են գետնին հարող եւ կոշտ քարով շարված մի քանի պող բարձրությամբ գոտին, միջհարկային ծածկերի մակարդակով անցնող հորիզոնական գոտին ու տանիքային կարնիզը: Ծածկերը իրականացվել են գերաններով եւ տանիքային մասում լուծված են հողածածկ հարթ կտուրով: Բացվածքները ուշագրավ են փայտի ճարտարապետության վարպետությամբ, դրանք բարեկեցիկ տան օրինակներում փայտյա փեղկեր (աբաժորներ) ունեն: Բնակելի տների ճակատները առհասարակ առինքնող են իրենց պարզությամբ եւ համաչափական գեղեցկությամբ: Տները սովորաբար տեղադրվել են հողակտորի առաջնամասում եւ ետին ճակատով բացվել են դեպի տան այգին:

Վանա ճարտարապետական ժառանգությունը հայ մշակույթի ինքնատիպ ակունքներից մեկն է: